

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/7

2 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Միլֆուդ» ՍՊԸ 05.11.2014 թ-ի դիմումով բերված միջնորդությունը 2013 և 2014 թ.թ.-ին հունվարի 1-ից ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

#### **«Միլֆուդ» ՍՊԸ կողմից բերված փաստարկները.**

Դիմումատուն հայտնում է, որ 2013 և 2014 թ.թ.-ի համար էլեկտրոնային եղանակով ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություններում ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու ժամկետի սկիզբը սխալ է նշվել: Մասնավորապես, վերոգրյալ հայտարարություններում ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու ժամանակահատվածի սկիզբը 2013 և 2014 թ.թ. հունվարի 1-ի փոխարեն նշվել է համապատասխանաբար 2013 և 2014 թ.թ. դեկտեմբերի 31-ը:

Ելնելով վերոգրյալից՝ «Միլֆուդ» ՍՊԸ-ն խնդրում է 2013 և 2014 թ.թ.-ին ավելացված արժեքի հարկ վճարող համարել հունվարի 1-ից:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Միլֆուդ» ՍՊԸ կողմից 2013 և 2014 թ.թ.-ի համար էլեկտրոնային եղանակով ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություններում ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու ժամկետի սկիզբը 2013 և 2014 թ.թ. հունվարի 1-ից նշելու փոխարեն նշվել է համապատասխանաբար 2013 և 2014 թ.թ. դեկտեմբերի 31-ը:

Քննարկվող դեպքում հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություններում ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու ժամկետի սկիզբը սխալ է նշվել թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը կրում է ձևական բնույթ, քանի որ ըստ էության, ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Միլֆուդ» ՍՊԸ դիմումով բերված միջնորդությունը՝ 2013 և 2014 թ.թ.-ին հունվարի 1-ից ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ, ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Յ Ո Ւ Մ Է՝**

«Միլֆուդ» ՍՊԸ 05.11.2014 թ-ի դիմումով բերված միջնորդությունը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝

  
  
**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**